Գավառի ավագ դպրոց

Հերթական ատեստավորման ենթակա
Ուսուցիչների վերապատրաստման
Դասընթաց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ներառական կրթության մարտահրավերները

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Տեր-Ղազարյան

Ղեկավար՝ Ամալյա Զոլյան

Գավառ 2022

Բովանդակություն

Ներածություն-.----------3

Հեղինակներ ովքեր անդրադարձել են ներառական կրթությանը----------5

ԳԼՈՒԽ I. Ներառական կրթության օրենսդրական հիմքերը----------7

1.1 Ներառական կրթության համակարգը ՀՀ-ում----------7

1.2 Ի՞նչ է ներառական կրթությունը----------9

1.3 Ի՞նչ ասել է ներառական կրթության մարտահրավերներ----------14

1.4 Ինչպե՞ս հաղթահարել ներառական կրթության մարտահրավերները----------17

1.5 Ներառական կրթության անհրաժեշտությունը Հայաստանում----------18

ԳԼՈՒԽ II. Ներառական կրթության հետազոտումը

Սարուխանի թիվ 3 միջն. Դպրոցում----------22

Եզրակացություն----------25

Օգտագործված գրականության ցանկ----------27

Ներածություն

Աշխարհում մոտ 240 միլիոն հաշմանդամ երեխա կա: Ինչպես բոլոր երեխաները, այնպես էլ հաշմանդամություն ունեցող երեխաները հավակնություններ ու երազանքներ ունեն իրենց ապագայի համար: Ինչպես բոլոր երեխաները, այնպես էլ նրանք որակյալ կրթության կարիք ունեն իրենց հմտությունները զարգացնելու և իրենց ողջ ներուժն իրացնելու համար:

Այնուամենայնիվ, հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ անտեսվում են քաղաքականություն մշակելիս՝ սահմանափակելով նրանց կրթության հասանելիությունը և սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքին մասնակցելու նրանց կարողությունը: Ամբողջ աշխարհում այս երեխաները դպրոցից դուրս մնալու ամենահավանականներից են: Նրանք բախվում են կրթության համար մշտական խոչընդոտների, որոնք բխում են խտրականությունից, խարանից և որոշում կայացնողների կողմից դպրոցական ծառայություններում հաշմանդամությունը ներառելու սովորական ձախողումից:

Ներառական կրթությունը, ինտեգրումը, ներառումը, համախմբումը, ինտեգրատիվ հասարակությունը, հանդուրժողականությունը, հավասարությունը, կրթության կամ խնամքի հատուկ կարիք ունեցող երեխաները այսօր դարձել են մեր կրթական լեքսիկոնի անբաժան մասը*:* Մեր հասարակության մեջ ներառական կրթությունը այլևս իրականություն է: Ներառական կրթությունը այնպիսի կրթական ծրագիր է, որը բացառում է երեխաների նկատմամբ ամեն տեսակի խտրականություն, բոլոր մարդկանց հանդեպ ապահովում է հավասար վերաբերմունք: Ստեղծվում են ուրույն պայմաններ կրթական համակարգում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար:

Երեխաները հաճախում են մանկապարտեզներ, նախակրթարաններ և դպրոցներ, որտեղ ունենալու են հարմարվելու մի շարք դժվարություններ: Հենց այս և նմանատիպ այլ խնդիրների լուծման նպատակով՝ դպրոցում իր ընդլայնված աշխատանքն է ծավալում ներառական կրթությանն աջակցող բազմամասնագիտական թիմը: Թիմում ընդգրկվում են ***հոգեբան, սոցիալական աշխատող, սոցիալական մանկավարժ, սիֆլոմանկավարժ*** և ***սուրդոմանկավարժ:***

Այս յուրօրինակ թիմի համատեղ աշխատանքի արդյունքում կապեր են հաստատվում երեխայի ուսուցիչների, ընտանիքի անդամների և այլ անձանց միջև, ովքեր կարևոր դեր են խաղում խնդրի ախտորոշման և լուծման մեջ:

Այս ամենից հետո կատարվում է համապատասխան միջամտություն և համատեղ ջանքերով լուծվում է հիմնախնդիրը:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ այսօր ողջ աշխարհում առանձնահատուկ մեծ կարևորություն են ներկայացնում ներառական կրթության հիմնախնդիրներով զբաղվող կառույցները: Այդ տեսանկյունից արդիական են ներառման ուղու տանող դժվարությունները, բարդություններն ու համընդհանուր ներառման հարցերը: Խնդիրներն ավելի են բարդանում, երբ խոսքը գնում է բարձրագույն կրթություն ստանալու մասին, քանզի ներառական կրթության չափանիշները ոչ այնքան բարձր ու կատարյալ են:

Սխալ կլինի անրադառնալ միայն կրթության մատչելիությանը, որովհետև ապահովված չի ֆիզիկական մատչելիությունը: Եթե հաստատությունների մուտքերի մոտ կան թեքահարթակներ, ապա ներսում ակնկալվող շարժումները միանգամից սահմանափակվում են:

Նմանատիպ զարգացումների ներքո՝ արդիական է դառնում, հատկապես ՀՀ-ում, ներառական կրթության իրականացման համալիր ուսումնասիրությունը, որը հնարավորություն է տալու բացահայտել ոլորտի ձեռքբերումները, առանցքային, հիմնական խնդիրները և գնահատել ՀՀ-ում ներառականությանը անցում կատարելու հանրակրթության համակարգի պատրաստվածության աստիճանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է գտնել և ուսումնասիրել ՀՀ ազգային օրենսդրությունը, որը վերաբերվում է ներառականության կարիք ունեցող երեխաների ներգրավմանը՝ այն համեմատելով միջազգային, իրավական նորմերին և չափանիշներին: Ինչպես նաև՝ հետազոտությունների արդյունքում տեսական, գործնական և օրենսդրական հիմքերի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումն ու առաջադրումը: ՀՀ-ում ներառական կրթության իրականացման առկա իրավիճակը այդ տեսանկյունից հարկավոր է գնահատել՝ վերահանելով ձեռքբերումները և խնդիրները, որոնք հիմք են հանդիսանալու համակարգի հետագա բարեփոխումների ընթացքում որոշումների կայացման համար:

Նշված նպատակադրումը առաջադրում է հետևյալ խնդիրների լուծումը՝

1. Ուսումնասիրել ներառական կրթության կարիք ունեցող անհատի իրավունքների ինստիտուտի տեսագործնական հիմնադրույթներն ու իրավափիլիսոփայական հիմքերը՝ նպատակ ունենալով համակարգել արդի, հիմնարար թեզերը, առաջարկել սեփական դիրքորոշում և դրանք թիրախավորել ավարտական աշխատանքի մեջ ուսումնասիրվող խնդիրների և առաջարկվող լուծումների հիմքում:

2. Ներկայացնել ԿԱՊԿՈՒ երեխաների իրավական և ներգրավման ամբողջական բնութագիրը՝ նպատակ ունենալով ներկայացնել այդ անձանց կրթական իրավունքների ապահովման առանձնահատկություններիտեսագործնական նկարագիրը։
3. Վերլուծել ՀՀ ներառական կրթության կարիք ունեցող անձանցիրավունքների ապահովման օրենսդրությունը և համեմատել միջազգային իրավունքի նորմերի պահանջների հետ՝ նպատակահարմար համարելով գույքագրել միջազգային փորձից նորովի առանձնացված, մեր իրականության մեջ դեռևս չկիրառվող լուծումներ։
4. Բացահայտել ՀՀ-ներառման տանող ուղու մարտահրավերները։
5. Մշակել, առանձնացնել ՀՀ-ում ԿԱՊԿՈՒ երեխաների իրավունքների ապահովման օրենսդրական և գործնական լուծումները ։

Հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից։ Առաջին գլուխ, որտեղ ներկայացվում է ներառական կրթության ծրագիրը ՀՀ-ում և անհրաժեշտություն է, ներառական կրթության նկատմամբ խտրականություններով դրսեվորումները։ Երկրորդ գլուխը ավարտվում է հետազոտական աշխատանքով, որին հաջորդում է աշխատանքի իրականացման արդյունքում կատարված եզրակացությունը։ Աշխատանքի վերջում ներկայացվում է օգտագործված գրականության ցանկ։

Հեղինակներ, ովքեր անդրադարձել են ներառական կրթությանը

Պեդրո Պոնսե դե Լեոն

Նա իսպանացի բենեդիկտացի վանական էր, ով ենթադրվում էր, որ առաջին մարդն էր, ով մշակեց խուլ/համրերին ուսուցանելու մեթոդ 16-րդ դարում: Նրա մեթոդների մանրամասները կամ երբեք չեն գրանցվել, կամ կորել են: Շատ աշխարհիկ մարդիկ այն ժամանակ հավատում էին, որ խուլերը չափազանց պարզամիտ էին քրիստոնեական վարդապետության ներքո փրկության համար իրավասու լինելու համար:

Թոմաս Հոփքինսն Գոլոդեյ

Նա օգնել է ֆինանսավորմանը և երկար տարիներ եղել է Հյուսիսային Ամերիկայի խուլերի կրթության առաջին հաստատության տնօրենը: Երբ բացվեց 1817 թվականին, այն Կոնեկտիկուտում կոչվում էր «Ամերիկյան ապաստան խուլ-համրերի համար», բայց այժմ այն հայտնի է որպես խուլերի ամերիկյան դպրոց:

Լուի Բրայլ

Նա կուրացել է այն բանից հետո, երբ պատահաբար դանակահարել է իր աչքին իր հոր թմբուկով: Հետագայում նա դարձավ գյուտարար և նախագծեց բրայլյան գրություն, որը թույլ է

տալիս կույր մարդկանց կարդալ տառերը ներկայացնող մի շարք կազմակերպված բախումներ: Այս հայեցակարգը ձեռնտու էր բոլոր կույր մարդկանց ամբողջ աշխարհից և սովորաբար օգտագործվում է նույնիսկ այսօր:

Էդվարդ Մայներ Գալոդեյ

Թոմասի որդին 1864-1910 թվականներին եղել է խուլերի Կոլումբիայի համալսարանի նախագահը: Նա փնտրեց քոլեջի կարգավիճակ այդ համալսարանի համար և ստացավ այն նախագահ Աբրահամ Լինքոլնի օգնությամբ: Այնուհետև դպրոցը հայտնի դարձավ որպես հատուկ կարիքավորների համար առաջին քոլեջ կամ Գալոդեյի համալսարան: Նա ժեստերի լեզվի ջատագովն էր:

Էգլանտին Ջեբբ

Նա բրիտանացի սոցիալական բարեփոխիչ էր, ով գրել էր Երեխայի իրավունքների հռչակագրի առաջին նախագիծը, երեխաների իրավունքների վերաբերյալ մի շարք հռչակագրեր, որոնք ընդունվել էին Միջազգային «Save the Children» միության կողմից, Ժնև, 1923 թվականին և հաստատվել Ազգերի լիգայի Գլխավոր ասամբլեայի կողմից 1924 թվականին:

Հելեն Քելլեր

Նա ամերիկացի գրող էր, ակտիվիստ և դասախոս: Նա առաջին խուլ/կույր մարդն էր, ով ավարտեց քոլեջը: Նա կույր և խուլ չի ծնվել. Միայն տասնինը ամսականում նա հիվանդացավ մի հիվանդությամբ, որը բժիշկները նկարագրեցին որպես «ստամոքսի և ուղեղի սուր գերբնակվածություն», որը կարող էր լինել որդան կարմիր տենդ կամ մենինգիտ: 1903թ-ին նա գրեց «Օպտիմիզմ» աշխատությունը, որտեղ նա խոսում էր աշխարհի ներդաշնակության մասին:

ԳԼՈՒԽ I
Ներառական կրթության օրենսդրական հիմքերը.
1.1 Ներառական կրթության համակարգը ՀՀ-ում

1990-ականներից ի վեր կրթական ծառայությունների հասանելիության խնդիրը հանդիսանում է միջազգային հանրության քննարկումների թիրախ, երբ ընդունվեցին երեխաների իրավունքների 20 պաշտպանության ոլորտներում երկու կարևորագույն փաստաթղթեր՝ «***Երեխաների իրավունքների կոնվենցիան»*** և ***«կրթություն բոլորի համար»*** համաշխարհային հռչակագիրը:[1]

Ներառական կրթության (ՆԿ) հիմնադրույթն ու գաղափարական սկզբունքների մշակումը տեղի է ունեցել 4 տարի անց՝ 1994թ.-ին Սալամանկայում ստորագրված համանուն հռչակագրի շրջանակներում, որը վերահաստատվել է 2000թ.-ին Սենեգալում՝ կրթության համաշխարհային ֆորումի ընթացքում: Սալամանկայի հռչակագրով և գործողությունների շրջանակով ամրագրվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, երիտասարդների և տարեցների համար կրթության կազմակերպումը: [2] Մասնավորապես, հռչակագրի համաձայն յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություններ և կրթության հիմնարար իրավունք: Կրթական համակարգերը պետք է մշակվեն և կրթական ծրագրերը իրականացվեն՝ հաշվի առնելով այդ առանձնահատկությունների լայն բազմազանությանը:

Սովորական դպրոցներում պետք է կարողանան սովորել կրթության առանձնագատուկ պայմանների կարիք ունեցող անձիք: Ներառական կրթության հայեցակարգային հիմքերի և միջազգային օրենսդրական ակտերի հետագա զարգացման մեջ նշանակալի ներդրում ունեցավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1996-ին ընդունված՝ «կրթության մեջ խտրականությունների դեմ կոնվենցիան»: Հետագայում՝ 2005թ.-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն շրջանառության մեջ դրեց երկու կարևորագույն հասկացությունների սահմանումները՝ ***«ներառում»*** և ***«ներառական կրթություն»***: «Ներառումը» սահմանվեց իբրև բոլոր սովորողների կարիքների հասցեագրմանն ուղղված գործընթաց, որը տեղի է ունենում ուսման, մշակույթի և համայնքներում

[1] «Մարդ և հասարակություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր № 5(6 7) Հր.2005 թ., էջ15
[2]Ներառական դասարաններում սովորող երեխաների հիմնախնդրի ըմբռնումը և լուծումը: Ուղեցույց ուսուցիչներ համար, “Պոլիգրաֆբիզնես”, Երևան 2009, 87 էջ

մասնակցությունը բարձրացնելու և կրթության մեջ և կրթությունից մեկուսացումը նվազեցնելու միջոցով[3]: ՆԿ-ը բնութագրվում է վեց առանձնահատկություններով.

1. *կրթությունը պետք է հիմնվի բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքի վրա*[4]
2. *կրթական գործընթացը պետք է կազմակերպվի այնպիսի մեթոդներով և մոտեցումներով, որոնք ուղղված են յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններից բխող կարիքների բավարարմանը,*
3. *դպրոցները պետք է մշակեն այնպիսի առարկայական պլաններ, որոնք կբալանսավորեն միասնականությունը և յուրահատկությունը,*
4. *դպրոցը պետք է բացահայտի և չեզոքացնի ուսումնական կյանքում լիարժեք մասնակցությանը խոչընդոտող գործոնները բոլոր աշակերտների համար,*
5. *ՆԿ-ը ենթադրում է կրթական գործընթացների կազմակերպման և կառավարման խորքային և երկարաժամկետ փոփոխություններ,*
6. *ՆԿ-ը ենթադրում է աջակից կառույցների և ռեսուրսների ստեղծում՝ ուսուցչական, ադմինիստրատիվ անձնակազմի, աշակերտների և ծնողների և ՆԿ համակարգի այլ շահառուների համար*[5]

2008թ.-ին Ժնևում կայացած Կրթության միջազգային կոնֆերանսի 48-րդ համաժողովի շրջանակներում քննարկվեցին մի շարք առանցքային դրույթներ, որոնք կարևոր են ՆԿ հայեցակարգային հիմքերի զարգացման և ՆԿ քաղաքականությունների մշակման և ներդրման համար: Խոսքը գնում է, մասնավորապես «ՆԿ», «կրթություն բոլորի համար» և «կրթության մեջ ինտեգրում» հասկացությունների մասին, որոնք հաճախ նույնացվում են, սակայն բովանդակում են սկզբունքորեն տարբեր նպատակներ և խնդիրները: «Կրթությունը բոլորի համար» հայեցակարգը չպետք է նույնացվի «ՆԿ» հայեցակարգի հետ: Թեև երկուսն էլ ուղղված են կրթության հասանելիության բարձրացմանը, այդուհանդերձ ՆԿ-ը նպատակ ունի ապահովելու որակյալ կրթություն՝ խտրականության ցանկացած ձևի բացառման միջոցով: ՆԿ-ն ավելի է, քան մասնակցությունը և հասանելիությունը: Այն կոչված է յուրաքանչյուրի

[3] Ներառական կրթություն իրականացնելու կարգ, հավելված ՀՀ կրթության և գիտության նախարարի <<06>> 08. 2010թ. հրաման

[4] 5Ներառական կրթության իրականացման ուղեցույց/Հանրակրթական հաստատությունների մանկավարժ. աշխատողների համար/, Երևան, 2008թ, էջ154

[5] Ներառական կրթության իրականացման ուղեցույց/Հանրակրթական հաստատությունների մանկավարժ. աշխատողների համար/, Երևան, 2008թ, էջ154

անհատական կարողությունների զարգացմանը՝ որակյալ կրթություն տրամադրելու միջոցով: ՆԿ-ն ավելին է քան մասնագիտությունն ու հասանելիությունը: Այն կոչված է յուրաքանչյուրի անհատական կարողությունների զարգացմանը՝ որակյալ կրթություն տրամադրելու միջոցով:

ՆԿ-ը չպետք է նույնացվի նաև ինտեգրում հասկացության հետ: Ինտեգրումն ապահովում է ԿԱՊԿՈՒ անձանց մասնակցությունը կրթական գործընթացներում, իսկ ներառումը ամրագրում է որակյալ կրթություն ստանալու բոլորի իրավունքը: Ավելին, ինտեգրման դեպքում աշակերտները իրենք պետք է հարմարվեն առկա դպրոցական համակարգին (առարկայական պլաններին, դասավանդման մեթոդներին, արժեքներին և այլն): Այս դեպքում դպրոցները փորձում են ապահովել անհատական ծրագրեր, տարբերակված մեթոդներ, հատուկ մանկավարժներ, որոնք էլ ավելի են ընդգծում տվյալ երեխայի ԿԱՊԿՈՒ կարգավիճակը և նրան առանձնացնում մյուսներից: Օրենքի համաձայն ԿԱՊԿՈՒ անձանց կրթությունը կարող է իրականացվել պետական և ոչ պետական հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատություններում, որոնք ապահովված են կրթության առանձնահատուկ պայմաններով: Օրենքը մանրամասն չի ամրագրում, թե որոնք են կրթության առանձնահատուկ պայմանները, որոնց պետք է համապատասխանի ՆԴ-ը: Փոխարենը, սույն օրենքն ամրագրում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման գործընթացը, վկայագրումը, ՆԿ կազմակերպման տնտեսական հիմքերը, միջազգային կառույցների հետ համագործակցությունը և այլն[6]

1.2 Ի՞նչ է ներառական կրթությունը

Ներառական կրթություն նշանակում է, որ բոլոր աշակերտները հաճախում և ողջունվում են իրենց դպրոցներում՝ տարիքին համապատասխան, կանոնավոր դասարաններում, և նրանց աջակցում են սովորելու, նպաստելու և մասնակցելու դպրոցի կյանքի բոլոր ասպեկտներին:

Ներառական կրթությունն այն է, թե ինչպես ենք մենք զարգացնում և ձևավորում մեր դպրոցները, դասասենյակները, ծրագրերն ու գործունեությունը, որպեսզի բոլոր սովորողները սովորեն և միասին մասնակցեն:

[6] krtutyun.wordpress.com

Ներառական կրթությունը բոլոր սովորողների համար որակյալ կրթության հասանելիության ապահովումն է՝ արդյունավետորեն բավարարելով նրանց բազմազան կարիքները՝ արձագանքող, ընդունելի, հարգալից և աջակցող ձևով:Սովորողները մասնակցում են կրթական ծրագրին ընդհանուր ուսումնական միջավայրում՝ աջակցությամբ նվազեցնելու և վերացնելու խոչընդոտներն ու բարդ առաջադրանքները, որոնք կարող են հանգեցնել բացառման:

Ներառական կրթությունն իրականացվում է ընդհանուր ուսումնական միջավայրում. այսինքն՝ կրթական միջավայր, որտեղ տարբեր ծագում ունեցող և տարբեր կարողություններ ունեցող սովորողները միասին սովորում են ներառական միջավայրում: Սովորողների սովորական ուսուցման ժամերի մեծ մասի համար օգտագործվում են ընդհանուր ուսումնական միջավայրեր և կարող են ներառել դասասենյակներ, գրադարաններ, մարզադահլիճներ, ներկայացումների թատրոններ, երաժշտական սենյակներ, ճաշարաններ, խաղահրապարակներ և տեղական համայնքը: Ընդհանուր ուսումնական միջավայրը այն վայրը չէ, որտեղ մտավոր հաշմանդամություն ունեցող կամ այլ հատուկ կարիքներ ունեցող անձիք սովորում են իրենց հասակակիցներից առանձին:

Արդյունավետ ընդհանուր ուսումնական միջավայրեր.

- ✓ *Յուրաքանչյուր անձի հնարավորություն է տրվում լիարժեքորեն մասնակցել ուսումնական միջավայրին, որը նախատեսված է բոլոր սովորողների համար և կիսվում է ընտրված կրթական միջավայրում հասակակիցների հետ.*
- ✓ *Ապահովել դրական մթնոլորտ, խթանել պատկանելության զգացումը և ապահովել անձի առաջընթացը դեպի համապատասխան անձնական, սոցիալական, զգացմունքային և ակադեմիական նպատակներ.*
- ✓ *Արձագանքում են անհատական ուսուցման կարիքներին՝ ապահովելով բավարար մակարդակի աջակցություն և կիրառելով ուսանողակենտրոն ուսուցման պրակտիկա և սկզբունքներ:*
- ✓ *Համընդհանուր ուսումնական միջավայր. ներառական միջավայր, որտեղ ուսուցումը նախատեսված է խառը ունակություններով սովորողներին և համայնքի դպրոցում իրենց հասակակիցների խմբին մատուցելու համար՝ միաժամանակ արձագանքելով նրանց անհատական կարիքներին որպես սովորող և օգտագործվել սովորողների մեծամասնության համար նախատեսված ուսուցման ժամերը.*

Ուղղորդող սկզբունքներն են՝ *հարգանքը, արժանապատվությունը, հավասարությունը, բազմազանությունը, մարդու իրավունքները, արդարությունը և արդարադատությունը, ինքնորոշումը, փոխադարձ պատասխանատվությունը, ներառումը, բարոյական քաջությունը*[7]*:*

Արժեքներ և համոզմունքներ:

- Մարդկային ընտանիքի բոլոր անդամները լիարժեք մարդիկ են: Մեր մարդկային էությունը չի կարող կրճատվել բառերով, պիտակներով, կատեգորիաներով, սահմանումներով կամ գենետիկ օրինաչափություններով: Յուրաքանչյուր մարդ յուրահատուկ է: Ոչ ոք չի կարող փոխարինվել կամ պատճենվել: Բոլոր մարդիկ անասելի են:
- Բոլոր մարդիկ ունեն հարգանքի իրավունք: Հարգանքը պահանջում է յուրաքանչյուր մարդու արժանապատվության ճանաչում և հոգատարություն: Արժանապատվությունը փխրուն է: Այն պետք է պաշտպանված լինի բոլոր վնասներից:
- Բոլոր մարդիկ ունեն բնածին արժանապատվություն: Արժանապատվությունը մեզ է պատկանում միայն այն պատճառով, որ մենք կանք: Դա այն չէ, որ մենք վաստակում ենք կամ ստանում:
- Բոլոր մարդիկ ունեն անօտարելի արժանապատվություն: Արժանապատվությունն իրավամբ չի կարելի անտեսել, նվազեցնել կամ խլել:
- Բոլոր մարդիկ ունեն հավասար արժանապատվություն: Արժանապատվությունը կախված չէ ֆիզիկական, մտավոր կամ այլ հատկանիշներից: Դա կախված չէ նաև այս հատկանիշների վերաբերյալ այլ մարդկանց կարծիքներից:
- Բոլոր մարդիկ ունեն բնածին և հավասար արժեք: Որպես անձ մեր արժեքը ոչ վաստակված է, ոչ էլ կուտակված: Այն կապված չէ առողջական վիճակի կամ որևէ գենետիկ կամ այլ անձնական հատկանիշի հետ:
- Բոլոր մարդիկ ունեն աճի և արտահայտվելու բնածին կարողություն: Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ***սնվելու՝ ֆիզիկապես, մտավոր կերպով, սոցիալապես, էմոցիոնալ կերպով և հոգեպես:***
- Բոլոր անձինք ունեն հավասար հասանելիության և հնարավորությունների իրավունք: Հավասարությունը պահանջում է պաշտպանություն խտրականության կամ վնասի

[7] https://additioapp.com/en/what-is-an-inclusive-education/

բոլոր ձևերից և հավասար մասնակցություն ապահովելու համար անհրաժեշտ աջակցությունից օգտվելու հնարավորություն[8]:

Ինչու՞ է ներառումն անհրաժեշտ. Երեխաները անկախ հաշմանդմությունից կամ սովորելու դժվարություն ունենալուց դպրոցն ավարտելուց հետո հասարակական կյանքում ունենում են որոշակի դերակատարություն և վաղ փուլը հանրակրթկան խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապտրաստությունն է ինտեգրված կյանքի համար: Հաշմանդամություն ունեցող երեխաները ունեն նույն խմբին պատկանելու իրավունք: Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմրեցում: Ներառական կրթությունը օգնում է հաղթահարելու խտրականությունը:[9]

Վերջինս ամրագրում է ՀՀ-ում ներառական կրթության իրականացման երեք հիմնական դրույթներ: Այդ դրույթներն են.

1. *ԿԱՊԿՈՒ երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն ընտրելու հանրակրթական հաստատությունը և պարտադիր պետական կրթական ծրագրերը,*
2. *ԿԱՊԿՈՒ երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական և այլ ծառայություններից,*
3. *երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման[10]*
4. *Հատուկ կրթական հաստատություններում և ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում պետական աջակցությունից օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող հետևյալ երեխաները.*

a) խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչութային և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաները,

b) լսողության խանգարում՝ չլսող (խուլ), թույլ լսող և լսողության կորուստ ունեցող երեխաները,

c) տեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսնող, ուշ կուրացած, շլություն ունեցող երեխաները,

d) մտավոր հետամնացություն ունեցող երեխաները,

---

[8] https://inclusiveeducation.ca/about/what-is-ie/

[9] ՀՀ օրենքը <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>, 2005թ.

e) հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաները,

f) հոգեբանական զարգացման խնդիրներ, ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ ունեցող երեխաները,

է)վարքային և հուզակամային ոլորտի խանգարումներ ունեցող երեխաները:[10]

Ներառական կրթության համակարգի առանցքային տարրերը

ԿԱՊԿՈՒ անձանց մասին կրթության օրենքը, ներառական կրթության պետական ծրագիրը և ՆԿ-յան իրականացման կարգի դրույթները կարգավորում են ներառական կրթության համակարգի գործառնությունը՝ սահմանելով վերջինիս բաղկացուցիչ տարրերի միջև փոխհարաբերությունները, փոխազդեցության ոլորտները և փոխկապվածության աստիճանը: Ներառական դպրոց մուտք գործելու առաջին քայլը երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն է (ԿԱՊԿԳ), որը ՀՀ-ում իրականացվում է պետականորեն հավատարմագրված բժշկահոգեբանամանկավարժական գնահատման (ԲՀՄԳ) կենտրոնի կողմից:

Երեխայի ԿԱՊԿԳ միջոցով տեղի է ունենում առանձնահատուկ պայմանների սահմանում, նրա հնարավորությունների և ունակությունների բացահայտում՝ կրթության արդյունավետ կազմակերպման պայմանների ու մանկավարժական մեթոդների անհրաժեշտության վերաբերյալ խորհրդատվության տրամադրման միջոցով:Ներառական կրթության կազմակերպման գործընթացի առանցքային բաղադրիչներից մեկը անհատական ուսումնական պլաններն են (ԱՈՒՊ): Համաձայն ներառական կրթության կազմակերպման պետական կարգի 6-րդ և 7-րդ կետերի, ներառական կրթական հաստատություններում յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ երեխայի ուսուցումը կազմակերպվում է ԱՈՒՊ-ով, որը պետք է կազմվի ուսումնական հաստատություն երեխայի ընդունվելուց հետո մեկ ամիս անց: ԱՈՒՊ-ը կազմվում է ներառական կրթությանն աջակցող մասնագետների՝ սովորողի հետ աշխատող ուսուցիչների, հատուկ և սոցիալական մանկավարժների, հոգեբանի կողմից:ԱՈՒՊ-ը այն փաստաթուղթն է, որի հիման վրա գնահատվում է ԿԱՊԿՈՒ երեխայի առաջադիմությունը և որոշում է կայացվում՝ դասարանից դասարան տեղափոխելու համար:ԿԱՊԿՈՒ անձանց կրթության մասին ՀՀ օրենքի հոդված 23-ը անդրադառնում է ՆԿ իրականացնող ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական և գիտամեթոդական ապահովմանը, մասնավորապես ԿԱՊԿՈՒ անձանց կրթություն իրականացնող ուսումնական

[10] Բաց Ֆայլ Ներառական կրթության մասին. Օժանդակ նյութեր մենեջերների և ադմինիստրատորների համար, ՅՈՒՆԵՍԿՕ-2004թ. էջ 82

հաստատությունների նյութատեխնիկական բազան, կախված այդ հաստատությունների տիպերից և ձևերից, ներառում է սովորողների համար անհրաժեշտ տարածքներ և կառույցներ: ԿԱՊԿՈՒ երեխաները ապահովվում են դասագրքերով, հատուկ գրենական պիտույքներով ու հարմարանքներով, գիտամեթոդական նյութերով, իսկ նյութատեխնիկական և գիտամեթոդական միջոցներով ապահովումը ֆինանսավորվում է պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

Որոշակի կանոնակարգվածություն կա միայն մասնագիտական ռեսուրսների տեսանկյունից: Մասնավորապես ՀՀ ՆԿ ծրագրում նշված է, որ ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է: Մեթոդի կարևոր բաղկացուցիչ մաս է կազմում աջակցող թիմի ստեղծումը, որի մեջ ներգրավված են երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ (ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ հոգեբան, լոգոպեդ), երեխայի ծնողը և թիմի համակարգողը: Բազմամասնագիտական թիմը գնահատում է յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները, և մշակում է երեխայի ուսուցման անհատական պլանը՝ ուղղված կարիքի բավարարմանը: ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը կազմակերպվում է հիմնական առարկայական ուսուցիչների կողմից՝ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ համատեղ ուսուցման միջոցով:

Այսպիսով, ներառական կրթության կազմակերպման գործընթացի արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է հետևյալ գործոններով՝ երեխաների առանձնահատուկ կրթական կարիքների բացահայտում ու ժամանակին և պրոֆեսիոնալ գնահատում, ԿԱՊԿՈՒ աշակերտների կարիքներին համապատասխան ԱՈՒՊ-երի մշակում, երեխաների հետ անմիջականորեն աշխատող մանկավարժական թիմի մասնագիտական որակներ, «բազմամասնագիտական թիմ-առարկայական ուսուցիչներ» համագործակցություն, ԱՈՒՊ-երի մշակմանը ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների ակտիվ մասնակցություն:[11]

1.3 Ի՞նչ ասել է ներառական կրթության մարտահրավերներ

Ներառական կրթությունը համախմբում է բոլոր սովորողներին մեկ դասարանում և համայնքում՝ անկախ նրանց թուլությունից կամ ուժից որևէ կոնկրետ բնագավառում և փորձում է առավելագույնի հասցնել բոլոր անձանց ներուժը: Այն ռազմավարությունների, գործողությունների և գործընթացների լայն շրջանակ է, որը նպաստում է հավասար կրթության

[11] Ալեքսանյան Լ. <<Ներառական կրթություն>>, Հավասարը հավասարին ուսուցում, վերապատրաստման դասընթացի նյութերի փաթեթ. Երևան 2001թ., էջ 13

համընդհանուր իրավունքին: Ներառական կրթության որոշ մարտահրավերներ կան: Այս ենթագլխում կքննարկվեն ներառական կրթության իրականացման հիմնական խնդիրները և ներառական կրթության մարտահրավերների լուծումները:

Ծնողների բացասական վերաբերմունքը. ներառական կրթության հաջող իրականացումը հիմնականում կախված է հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների աջակցությունից: Որոշ ծնողներ չեն սիրում իրենց հաշմանդամություն ունեցող երեխաներին տալ կրթության, ինչը կարող է խոչընդոտ դառնալ ներառական կրթության իրականացման համար:

Տրանսպորտային միջոցների բացակայություն: Ներառական կրթությունը այնպիսի հարթակ է, որտեղ ուսումնական միջավայրը ֆիզիկապես մատչելի է և բարեկամական տարբեր խմբերի համար: Ներառական կրթության հաջող իրականացման համար կարևոր գործոն է հատուկ երեխայի համար տրանսպորտային միջոցների ապահովումը: Սակայն նման հարմարությունների բացակայությունը խոչընդոտում է նրանց արժանապատիվ և հավասար կրթություն ստանալու հնարավորությունը: Այսպիսով, դա ներառական կրթության մարտահրավերներից մեկն է:

Տեղական համայնքի վատ համագործակցությունը: Ներառական կրթությունը պետության և կառավարության, տեղական համայնքների միջև ամուր համագործակցության խնդիր է: Բայց ընդհանուր առմամբ տեղական ինքնակառավարումը շատ աղքատ է, նրանք չունեն ազատ ժամանակ և ռեսուրսներ իրականում ներառական արժեքներ կիրառելու համար:

Ուսուցչի բացասական վերաբերմունքը: Ուսուցիչները առանցքային դեր են խաղում ներառական կրթության մեջ: Ուսուցիչների բացասական վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող և մարգինալացված երեխաների նկատմամբ, ինչպես նաև նրանց կրթության մեջ ներառելը մարտահրավեր է և ծնում է ներառական կրթության հիմնական խոչընդոտները:

Ուսուցիչների ոչ պատշաճ վերապատրաստում: Շատ ուսուցիչների երբեք չեն սովորեցնում, թե ինչպես սովորեցնել հաշմանդամություն ունեցող երեխաներին կամ ընդհանրապես ինչպես սովորեցնել երեխաներին ընկերական, ակտիվ ձևով: Ուսուցիչը վճռորոշ դեր ունի ներառական կրթության հաջող իրականացման հարցում: Համապատասխան վերապատրաստման, համապատասխան գիտելիքների և կրթական որակավորումների բացակայությունը, որոնք խիստ անհրաժեշտ են դասավանդման

կանխորոշված նպատակին հասնելու համար կարող են մարտահրավեր հանդիսանալ այս եզրույթում[12]:

Ոչ պատշաճ աջակցությունը ներառական կրթության իրականացման այլ խնդիր է: Աջակցություններ են ֆինանսավորման աջակցությունը՝ ներառական կրթությանը նպաստելու համար: Առանց ֆինանսական միջոցների աջակցության հնարավոր չէ իրականացնել ներառական կրթության ծրագիր: ՅՈՒՆԵՍԿՕ-ն (2009 թ.) հայտարարեց, որ ֆինանսավորումը հանդիսանում է ներառման պրակտիկայի հիմնական սահմանափակումը: Անբավարար ֆինանսավորումը կարող է խոչընդոտել շարունակական մասնագիտական զարգացմանը, որն օգնում է մասնագետներին և դասարանի ուսուցիչներին թարմացնել նվազագույն փորձը:

Մեծաքանակ դասարանները կարող են լուրջ մարտահրավեր հանդիսանալ և սովորողի և ուսուցչի համար: Դժվար է ուշադիր լինել և գրավել ուշադրություն: Գրեթե անհնար է դառնում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ցուցաբերել անհատական օգնություն:

Դպրոցը: Ներառական կրթության իրականացման ևս մեկ խոչընդոտ է դպրոցի գործոնը: Անբավարար դպրոցների բյուջեները, ինչը հանգեցնում է համապատասխան պայմանների բացակայությանը: Ինչպես անմատչելի դպրոցական շենքը, ուսուցիչների ծանրաբեռվածությունը, հաշմանդամություն ունեցող երեխաների սահմանափակ աջակցությունը ազդում են հաջող կրթության իրականացման վրա: Ավելին, ուսուցիչների և դպրոցի անձնակազմի շրջանում հաշմանդամության վերաբերյալ սահմանափակ իրազեկվածությունը ներառականության իրականացման ամենամեծ թերությունն է:

Սոցիալական խոչնդոտներ: Հաշմանդամության նկատմամբ համայնքի անդամի բացասական վերաբերմունքը կարող է բխել կրոնական և մշակութային համոզմունքներից, օրինակ. հաշմանդամությունը կարող է դիտվել որպես պատիժ:[13]

Ներառական կրթության հայեցակարգի անհասկանալիությունը ներառական կրթության իրականացման կարևոր մարտահրավերներից կամ խնդիրներից է: Քանի որ մարդիկ սխալ են հասկանում և սխալ են մեկնաբանում ներառական կրթություն հասկացությունը: Այսպիսով, հաշմանդամության սոցիալական կառուցման մասին չըմբռնելը ամենամեծ խոչընդոտն է ներառման ճանապարհին: Ուստի, վերը նշված քննարկումից կարելի է ասել, որ ներառական կրթությանն ուղղված մարտահրավերները կարող են ծագել տարբեր ուղղություններից,

[12] "Inclusive and adaptive teaching: meeting the challenge of diversity in the classroom"; Peter Westwood; 2018; էջ՝ 24
[13] Leading an inclusive school: Richard A. Villa, Jacqueline S. Thousand; էջ՝ 201

ինչպիսիք են վերաբերմունքը, փոփոխության դիմադրությունը, կոշտ դպրոցական համակարգը , ուսումնական միջավայրը և այլն:

Ներառական կրթության խոչընդոտներն են՝

1) Դպրոցական ոչ ճկուն ծրագիր

2) Անպատշաճ հաղորդակցություն

3) Ներառական ուսումնական միջավայրի բացակայություն

4) Կառավարության անպատասխանատու վերաբերմունք

5) Սոցիալական և մշակութային կարծրատիպեր

6) Տեղական ծառայությունների մասին իմացության բացակայություն

7) ներառական կրթություն հասկացությունը սխալ մեկնաբանելը

8) վերապատրաստված ուսուցչի բացակայություն

9) Ծնողների չներգրավվածություն

10) Հաշմանդամություն ունեցող անձանց չճանաչվածություն.[14]

1.4 Ինչպե՞ս հաղթահարել ներառական կրթության մարտահրավերները

Ներառական կրթության իրականացման խնդիրները հաղթահարելու համար պետք է լավ համագործակցություն լինի կառավարության, համայնքների և շահագրգիռ մարմինների միջև, որպեսզի ըմբռնեն դեպի ներառական կրթություն տանող ճանապարհը: Ներառական կրթությունը առանց խտրականության ընդունում է բոլոր երեխաներին սովորական կամ հանրակրթական դպրոցներում: Ստորև ներկայացված են ներառական կրթության մարտահրավերների վերաբերյալ առաջարկվող միջոցառումները կամ լուծումները:

1. Հաշմանդամության հետ կապված ուսումնասիրություններ: Ներառական մշակույթ զարգացնելու համար անհրաժեշտ է վերացնել ներառական կրթության մասին թյուր կարծիքը: Եվ ներառականության մասին չհասկացվածության այս խոչընդոտը վերացնելու համար պետք է ջանքեր գործադրվեն՝ ներգրավելու հաշմանդամություն ունեցող անձանց ուսումնասիրություններն ու նման ուսումնասիրության կարևորությունը կրթական համակարգի բոլոր մակարդակներում:

[14] "Assessing children in inclusive settings: a blended practices approach": Dr. Jennifer Grisham Ed.D., Kristie Pretti-Frontczak Ph.D., Stephen J. Bagnato Ed.D. NCSP, Teresa Brown M.Ed.: 2013; էջ՝ 64:

2. Լիարժեք ներառման մոդել։ Ինչպես վերը նշվեց, ուսուցիչների և ծնողների բացասական վերաբերմունքը հատուկ երեխաների նկատմամբ խոչընդոտ է հանդիսանում ներառականության իրականացման ճանապարհին։ Ներառումը լիարժեք ներառման մոդելի տեսքով պետք է ընդունվի որպես բոլոր երեխաների կրթության լայն քաղաքականություն առանց որևէ տեսակի խտրականության։

3. Ուսուցիչների կրթություն Ներառական կրթության խոչընդոտները հաղթահարելու համար։ Առաջնահերթությունը պետք է տրվի նախադպրոցական, ինչպես նաև ծառայողական ուսուցիչների կրթությանը, առարկայական ուսուցիչների և աշակերտների հետ կապված դպրոցի այլ անձնակազմի համար՝ նրանց անհրաժեշտ գիտելիքներով և վերաբերմունքով ներառական համակարգում աշխատելու համար։

4. Ներառման մշակույթի ձևավորում։ Ներառական կրթության խոչընդոտները կամ մարտահրավերները վերացնելու համար շատ անհրաժեշտ է փոխել տարբեր կարիքներ ունեցող երեխաների շուրջ քարացած մարդկանց վերաբերմունքը։ Սա փոխելու համար անհրաժեշտ է ստեղծել ներառական մշակույթ։ Կան բազմաթիվ առաջարկական միջոցներ կամ լուծումներ ներառական կրթության մարտահրավերներին։ Ինչպե՞ս կարելի հաղթահարել ներառման խոչընդոտները. ստեղծելով լավ համագործակցություն, ներառական քաղաքականություն, բարելավելով տրանսպորտային համակարգը, ճկուն ուսումնական պլանը, ներառման իմպրովիզացված պլանը և այլն։ Սրանք են օգնում լուծել ներառական կրթության իրականացման խնդիրները։

1.5 Ներառական կրթության անհրաժեշտությունը Հայաստանում

Ուրախալի է այն փաստը, որ վերջին տարիներին մեր պետական մարմիններն ու հասարակական կազմակերպություններնակտիվորեն ներգրավված են ներառական կրթության շուրջ հասարակական կարծիքի ձևավորմամբ, խնդիրների պարզաբանմամբ և լուծումների որոնումներով և համապատասխան օրենքների մշակմամբ։ Հայաստանը այդ առումով դեռևս ձևավորման փուլում է։ Օրենքներ մշակելիս հաճախ վերցվում է այլ երկրների անցած փորձը և ներկայացվում այդ ճանապարհի լույսի ներքո։ Ուսումնական հաստատությունների ինստիտուտը նորացնելու նպատակով իրականացվող ներառական կրթությունը լուրջ մարտահրավերի առաջ է կանգնեցնում մեր ողջ կրթական համակարգը,

ըմբռնումներն ու մոտեցումները: Հանրակրթական համակարգում հատուկ կրթության բարեփոխման ծրագիրը նույնպես հիմնվում է երկու անժխտելի սկզբունքների վրա՝ կրթության մատչելիության և որակի ապահովման սկզբունքների վրա:

Ներառական կրթությունը բաղկացուցիչ մասն է հանրակրթական զարգացման գործընթացի, որն էլ ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար:

Ներառական կրթության առանցքային և ամենակարևոր խնդիրներից մեկն է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելով մարդկանց զանազան կրթական պահանջները: Հետևաբար, եթե այն կարելի է համարել մատչելի, այն հասանելի է և շարունակական իր փոփոխություններով կրթությունը ավելի արդյունավետ կդառնա, կշահեն բոլոր սովորողները, այլ ոչ միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները: Հասարակության մեջ չի կարելի ստեղծել համընդհանուր կրթական գաղափար, որն ուղղված լինի ներառական գործընթացին, առանց որևէ փոփոխություններ ներմուծելով հասարակական կյանքում և փոխհարաբերություններում: Ամեն մի հանրություն ինքը պետք է մշակի և իրագործի գաղափարները, ելնելով տեղային, մշակութային, սոցիալ-տնտեսական և այլ առանձնահատկություններց:

Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար: Ներառական կրթությունը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները: Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ պայմանների կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը:

Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝ տեղեկատվության բացակայությունը նրանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու

փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Սակայն փորձը ցույց է տալիս, որ բարենպաստ մթնոլորտում երեխաները ավելի հանգիստ են Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները և քաղաքական գործիչները: Բոլոր երեխաները անկախ որևէ խոցելի խմբին պատկանելուց ունեն որոշակի դերակատարումներ հասարակության մեջ:

Նաև ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին: Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դրանում կշահեն նաև այն երեխաները, որոնք խնդիրներ չունեն և պետք է գործուն լինի այն սկզբունքը, որ նրանց միմյանցից պաշտպանելու անհրաժեշտություն չկա: Միայն ներառական մոտեցումն է կարող նվազեցնել վախը և նպաստել հարգանքի, փոխօգնության, փոխըմբռման հաստատմանը:[15]

Հատուկ և ներառական կրթության տարբերությունները և առանձնահատկությունները:

Հատուկ կրթություն – դա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթաց է:

Այսպիսով, պետք է առանձնացնել.

- Երեխաների կրթությունը առանձնացված միջավայրում,
- Կրթությունը կառուցված է ուսուցչի անհատական աշխատանքի վրա,
- Առկա է ինտեգրացված ուսուցումը, երեխան հանրակրթական դպրոցում է,
- Դպրոցում իրականացված են փոփոխություններ՝ հարմարեցնելով առանձնահատուկ կարիքներին:

Ներառական կրթությունը - դա առանձնահատուկ կրթության կարիք ունեցող երեխաների ներառումն է հանրակրթական դպրոցում, հավասար պայմաններ ստեղծելով իրեն հասակակիցների համահավասար դասարաններում:

Այս դեպքում.

- Երեխաների կրթությունը իր համայնքի սովորական դպրոցում է իրականացվում: Սա մի հնարավորություն է, որպեսզի երեխաները հաճախեն տեղական բնակավայրին մոտ մանկապարտեզ և դպրոց,

[15] Բաց Ֆայլ Ներառական կրթության մասին. Օժանդակ նյութեր մենեջերների և ադմինիստրատորների համար, ՅՈՒՆԵՍԿՕ-2004թ. էջ 82

- Գործում է աշխատանքի թիմային սկզբունքը,
- Ներառական կրթության իրականացմանն ուղղված բոլոր ջանքերը հիմնվում են իրավահավասարության գաղափարի վրա, բացառվում է խղճահարությունը, բարեգործությունը,
- Բոլոր երեխաները կարող են սովորել և պետք է ապահովված լինեն դրա համար անհրաժեշտ պայմանները,
- Կա մշակված մեթոդաբանություն ամբողջ կրթական համակարգի համար և յուրաքանչյուր երեխա պետք է գրավի իր տեղը այդ համակարգում և սա հնարավորություն կտա ընտանիքի գրկում լինելով հանդերձ իրականացնել նաև լիարժեք կրթության հնարավորությունը:
- Գործընթացում ընդգրկված են խնդրին առնչվող բոլոր մասնագիտական խմբերը, այսինքն ում միջամտությունը օգտակար կլինի գործընթացի արդյունավետության իրականացման համար:

Գլուխ II

Ներառական կրթության հետազոտումը Սարուխանի թիվ 3 միջն. Դպրոցում

Որպես կրթական բարեփոխումների մի մաս՝ ներառական կրթությունը 2000թ.-ից ի վեր հանդիսանում է ՀՀ կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը: 2005թ.-ին ընդունվեց օրենք ՀՀ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց կրթության մասին: ՆԿ-ը ընդգրկվեց կրթության զարգացման պետական ծրագրերի մեջ:

ԿԱՊԿՈՒ անձանց կրթության մասին օրենքի ընդունումից 7 տարի անց ՀՀ ազգային ժողովը հաստատեց հանրակրթության մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծը, որի համաձայն ՆԿ մասին օրենքը դառնալու է հանրակրթության օրենքի մի մասը: Ըստ այդմ հանրակրթական համակարգը նախապատրաստելով համընդհանուր ներառականության, որը պլանավորված է կյանքի կոչել մինչև 2025 թվականը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է գնահատել ՀՀ-ում ՆԿ իրականացման առկա վիճակը՝ վերհանելով խնդիրներն ու ձեռքբերումները: Այս ամենը հիմք կհանդիսանան համակարգի հետագա բարեփոխումների ընթացքում որոշումներ կայացնելու համար: Հետազոտությունը իրականացվել է Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի թիվ 3 միջն. Դպրոցում:

Երկու տարվա կտրվածքով իրականացվել է աշխատանք սեփական վկայությունների հիման վրա: Այս հետազոտությունը իրականացվել է որակական մեթոդով: Հարցազրույցը ընտրվել է որպես հետազոտության մեթոդ: Ընդհանուր առմամբ, հետազոտությանը մասնակցել են 8 ներկայացուցիչ (տնօրեն և աջակցող թիմի անդամներ) և 2 ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներ: Բացի այդ ուսումնասիրվել են նաև ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների, ինչպես նաև 5 առարկայական ուսուցիչների և 14 աշակերտների դիրքորոշումները: Հետազոտությունը անրադարձել է այնպիսի հարցադրումների քննարկմանը, ինչպիսիք են՝ ՀՀ-ում ՆԿ համակարգի ձևավորման և զարգացման հեռանկարները, դպրոցի գործառնության առանձնահատկությունները (ֆիզիկական, նյութատեխնիկական հագեցվածությունը, մարդկայինռեսուրսները) , մասնագետների վերապատրաստումների համակարգի նկարագիրը, ներառական երեխաների գնահատման և անհատական ուսումնական պլանների կազմման առանձնահատկությունները, ինչպես նաև համակարգի ձեռքբերումները և կենսունակության հնարավորություններն ու համընդհանուր ներառականությանը պատրաստվածության աստիճանը:

Տվյալ հետազոտության շրջանակներում դպրոցի ֆիզիկական հարմարեցվածությունը գնահատվել է բավարար: Պայմանները բավարարելը կապված է բավականին ֆինանսների ներդրման հետ: Սա խնդիր է , որն այսօր որևէ դպրոց սեփական միջոցներով չի կարող իրականացնել: Դասընթացները կազմակերպվում են բոլորի համար նախատեսված դասասենյակներում: Դպրոցը այդքան էլ ապահովված չէ նյութատեխնիկական ռեսուրսներով: Սակայն դպրոցում գոյություն ունի աջակցող թիմ:

ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները գոհ են, որ իրենց երեխաների հետ անհատական աշխատանքը բավարար ժամանակով է տարվում: ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների և աջակցող թիմի միջև կա ջերմ համագործակցային հարաբերություններ: Սակայն որոշ առարկայական ուսուցիչների մոտ ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ կան խակալ և կարծրատիպային մոտեցում:

Պետք է ասել, որ խնդիրը երկու կողմ ունի: Աշակերտների մեծ մասի կարծիքով ուսուցիչները ԿԱՊԿՈՒ աշակերտներին վերաբերվում են այնպես, ինչպես մյուսներին: Սակայն աջակցող թիմի անդամների հետ անհատական հարցազրույցներում հաճախ քննարկվում է այն խնդիրը, որ որոշ դեպքերում առարկայական ուսուցիչները ԿԱՊԿՈՒ երեխաներին ընկալում են որպես անընդունակ, հիվանդ երեխաների, որոնց հետ անիմաստ է ժամանակ վատնել, քանի որ ոչ մի լուրջ գիտելիք չենկարող ընկալել:

Արդյունքում աջակցող թիմի վրա է ընկնում ողջ ծանուաբեռնվածությունը: Մի շարք առանցքային խնդիրներ կան ԱՈՒՊ կազմման գործընթացում: Ի՞նչ է իրենից ներկայացնում ԱՈՒՊ-ը, որն է դրա նպատակը, ծնողների ճնշող մեծամասնությունը գաղափար անգամ չունի: Այդ իսկ պատճառով ԱՈՒՊ-ների մշակմանը մասնակից են դառնում նաև ծնողները: Դպրոցի որոշ ծնողներ, ովքեր կապկու երեխաներին նույնացնում են «հիվանդ» և «հասարակության համար վտանգավոր» նձանց հետ, կոչ են անում այլ երեխաներին առանձնացնելմուրիշ դասարաններում, կամ նրանց ուսուցումը շարունակել կազմակերպել համապատասխան դպրոցներում:

Սակայն ԿԱՊԿՈՒ երեխա ունեցող ծնողների մի մասը ևս սխալ պատկերացում ունի ՆԿ նպատակների մասին: Նրանք հակված են ՆԿ-ն նույնացնել երեխաների համար շփման «տնից դուրս գալու» հնարավորությունների հետ: ԿԱՊԿՈՒ երեխաների երեխաները տիրապետում են այն մեխանիզմներին, որոնք վերաբերվում են իրենց երեխաների իրավունքների պաշտպանությանը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հասարակությունն է ստեղծում համընդհանուր ներառման ամենամեծ արգելքները։ Քանի որ, դպրոցն ու գյուղական համայնքն այդքան էլ հարմարեցված չեն նրանց կարիքներին, սակայն երեխաները պատրաստ են հանդուրժել ու սպասել միայն թե բենք էլ բոլորի նման հավասար պայմաններում սովորեն առանց որևէ խտրականությունների։

Եզրակացություն

Այսպիսով՝ ներառական կրթությունը կրթական այպիսի ծրագիր է, որն ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, բացառում է ամեն տեսակի խտրականություն երեխաների նկատմամբ, ներշնչում է պատկանելիության զգացում: Ստեղծում է ուրույն պայմաններ կրթական համակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց համար: Պայմաններ է ստեղծում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց հասարակության մեջ ներգրավելու համար:

Այսօրվա հրամայական պահանջն է, բոլոր բարեգործական և հասարակական կազմակերպությունները բարելավեն հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքն ու ստեղծեն հնարավորություններ նրանց լիարժեք կյանքի համար:

Համապատասխան պետական քաղաքականության իրականացումը հնարավորություն կտա բարենպաստ սոցիալական մակարդակ ապահովել հասարակության այդ շերտի նկատմամբ:

Ամփոփելով «Ներառական կրթության մարտահրավերները» թեման և կատարած դիտարկումների ու հետազոտության արդյունքները՝ կարող ենք ասել, որ ներառական կրթությունը մեր երկրում՝ մասնավորապես մարզային համայնքներում դեռևս կայացման փուլում է:

Առաջատար մասնագետների կարիք դպրոցները շատ ունեն, իսկ դպրոցների մասնագետներն էլ ունեն վերապատրաստման կարիք: Այնուամենայնիվ, ներառական համակարգի գործունեության շնորհիվ՝ ներկա փուլում մի շարք հիմնախնդիրներ գտել և գտնում են իրենց լուծումները:

Ինչևէ, դպրոցները պետք է կարողանան և պատրաստված լինեն այդ ծրագրերը իրականացնելու ապահովել պատշաճ պայմաններ, անձնակազմի կարողություններ, հմտություններ և վերաբերմունք: Դպրոցը այն վայրն է, որտեղ պետք է ձևավորվի ներառականության նոր մշակույթ: Քայլեր ձեռնարկվեն, դասեր և դասընթացներ կազմակերպվեն: Այս պարագայում ամենակարևորը պատշաճ միջավայրի ապահովելն է: Դպրոցում հավասար պայմաններ պետք է ապահովվի բոլոր սովորողների համար. ո՛չ արտոնյալներ պետք է լինեն և ո՛չ էլ անտեսվածներ: Յուրաքանչյուր հասարակություն ինքն է մշակում և իրագործում սեփական գաղափարները: Մեր երկրը այդ առումով դեռևս ճանապարհ ունի անցնելու:

Համապատասխան օրենքներ մշակելիս հաճախ հիմք ենք ընդունում այլ երկրների վարգը։ Կրթությունը՝ լինելով պետության կառուցման հենասյուներից մեկը, չի կարող անմասն մնալ այդ գործընթացներից։ Ներառական կրթությունը լուրջ մարտահրավերների առաջ է կանգնեցնում մեր կրթական համակարգը, դասական մոտեցումները, պետք է արդիականացնել այդ առումով ուսումնական հաստատությունների ինստիտուտը։

Ասել կուզեմ, որ կրթությունը որակյալ չի կարող համարվել և չի կարելի ասել. «մեր երկրում կրթությունը բոլորի համար է», եթե այդ կրթության կազմակերպման գործիքները, մեխանիզմները դեռևս ունեն բացառումներ երեխաների համար։ Այսինքն՝ ներառական կրթությունը իսկապես հնարավորություն է ոչ միայն բարելավելու մեր կրթական ոլորտը, այլ նաև մեր ողջ հասարակությունը։

Ներառական կրթությունը ավելին է, քան միայն դպրոցական կրթությունը։ Այն վաղվա հասարակության վերաբերմունքն ու մտածելակերպն է։ Հուսանք և լինենք համոզված, որ ապագայում մեր երկրի բոլոր դլրոցները կլինեն ներառական և այդ տերմինը՝ «ներառական» , իսպառ կվերանա, և չենք ասի.«այս աշակերտը ներառականից է, այն մեկը՝ ոչ...»։

Կարող ենք հաստատ ասել, որ նրանք ևս ուզում են ընկալելի միջավայր, որտեղ աշխարհը զերծ կլինի պատնեշներից ու խտրականություններից։

Այսպիսով՝ սա մի գործընթաց է, որի շնորհիվ տարեցտարի պակասում են հասարակությունից օտարված երեխաները։ Սա գործընթաց է, որը պիտի յասարակության վերաբերմունքի փոփոխության ճանապարհ անցնի։ Այո՛, կանցնի, որովհետև հենց հասարակության շահերից է այն բխում։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալեքսանյան Լ. <<Ներառական կրթություն>>, Հավասարը հավասարին ուսուցում, վերապատրաստման դասընթացի նյութերի փաթեթ. Երևան 2001թ., էջ 22

2. Բաց Ֆայլ Ներառական կրթության մասին. Օժանդակ նյութեր մենեջերների և ադմինիստրատորների համար, ՅՈՒՆԵՍԿՕ-2004թ. էջ 82

3. ՀՀ օրենքը <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>, 2005թ

4. «Մարդ և հասարակություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր № 5(6 7) Հր.2005 թ., էջ15

5. Ներառականդասարաններում սովորող երեխաների հիմնախնդրի ըմբռնումը և լուծումը:Ուղեցույցուսուցիչներիհամար, “Պոլիգրաֆբիզնես”, Երևան 2009, 87 էջ

6. Ներառական կրթություն իրականացնելու կարգ, հավելված ՀՀ կրթության և գիտության նախարարի <<06>> 08. 2010թ. հրաման

7. Ներառական կրթության իրականացման ուղեցույց /Հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար/, Երևան, 2008թ, էջ154

8. Assessing children in inclusive settings: a blended practices approach”: Dr. Jennifer Grisham Ed.D., Kristie Pretti-Frontczak Ph.D., Stephen J. Bagnato Ed.D. NCSP, Teresa Brown M.Ed.: 2013; էջ՝ 64:

9. Leading an inclusive school: Richard A. Villa, Jacqueline S. Thousand; էջ՝ 201

10. Inclusive and adaptive teaching: meeting the challenge of diversity in the classroom”; Peter Westwood; 2018; էջ՝ 24

Էլեկտրոնային հղումներ

11. krtutyun.wordpress.com/, 18.12.2018

12. http://unesdoc.unesco.org/images/0014/001402/140224e.pdf,

13. http://www.unesco.org/education/pdf/SALAMA_E.PDF

14. https://www.ascd.org/el/articles/inclusive-education-lessons-from-history

15.https://additioapp.com/en/what-is-an-inclusive-education/[16]

[16] Բոլոր հղումներով վերջին այցը կատարվել է 06/09/2022թ.